Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի ֆիզիկա / 4 դասաժամ /, քիմիա / 4դասաժամ/ , երաժշտություն / 4 դասաժամ / առարկաների ուսուցչի և ուսուցչի օգնական /0. 5 դրույք/ թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են 2025թ սեպտեմբերի 04-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 23-ին՝ժամը 14:00-ին, Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոցում. Հասցեն՝ Վայոց ձորի մարզ գ. Սալլի, փողոց 2, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-49-36-26 հեռախոսահամարով: